Ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման հարկային հաշիվ Ա1511613997

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ<br>(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|---|
| 20 | Մայիս | 2019 թ. | | | Ա | 1511613997 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | | | |
| 20 | Մայիս | 2019 թ. | Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հաստուն | Ճշգրտվող հաշվի | |
| | | | | | Սերիա | Համար |
| | | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | | [6] Համար | | [7] | |
| | 10 Մայիս, 2019 թ. | | 1 | | [8] | |
| | | | | | [9] | |
| [10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ) | | | | | | |

**Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի**

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 0 1 1 3 1 2 6 |
| [12] Անվանումը | «ԳԵՈԴԵԶԻԱ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 0 1 1 3 1 2 6 / 1 |
| [14] Բանկային տվյալները | Թիվ 1 ՏԳԲ — N 900018002049 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԿՈՄԻՏԱՍԻ Պ. 35/2 |
| [16] Լրացուցիչ տվյալներ | |

**Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի**

| | |
|---|---|
| [17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)<br>(ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [18] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [19] Բանկային տվյալները | ՀՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834 |
| [20] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [21] Լրացուցիչ տվյալներ | |

| [22] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[23] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը) | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումարը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Սևան ազգային պարկի Մարտունու տեղամասում գեոդեզիական փորձաքննության իրականացում թիվ 61202918 քր.գործով և փորձագիտական եզրակացության տրամադրում | օբյեկտ | 1 | 650916.6667 | 650916.67 | 20 | 130183.33 | 781100 |
| Ընդամենը | | | | | 650916.67 | X | 130183.33 | 781100 |

Դուրս գրող GHARAGULYAN RUZAN 5107511171

անունը, ազգանունը

Ստացող

 պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

20/05/2019 15:16:44

Ո Ր Ո Շ Ու Մ
ՄԱՍՆԱԳԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

06-ը մայիսի 2019թ. ք. Երևան

ՀՀ քնչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիբեռհանցագործությունների քննության վարչության ՀԿԳ քննիչ Ա.Գ.Ասատրյանս, քննարկելով վարույթիս թիվ 61202918 քրեական գործի նյութերը,

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝**

Թիվ 61202918 քրեական գործը հարուցվել է 25.04.2018թ.-ին ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության պաշտոնատար անձանց կողմից առերևույթ պաշտոնեական կեղծիք կատարելու, ինչպես նաև անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով իրենց ծառայողական պարտականությունները չկատարելու և դրա հետևանքով պետության օրինական շահերին էական՝ 4.700.000 ՀՀ դրամի գույքային վնաս պատճառել դեպքի առթիվ:

2018թ. հուլիսի 19-ից թիվ 61202918 քրեական գործն ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն և ընդունվել է վարույթ:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1313-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թիվ 1052-Ն որոշման հիման վրա՝ «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագրի իրականացման նպատակով, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Հ. Հովհաննիսյանի և «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Վահե Գուլանյանի միջև 02.10.2017 թվականին կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին թիվ ՀՀ-ԲՆ-ԴՇ-17/11 պայմանագիրը՝ 83.875.000 ՀՀ դրամ արժողության, որին կից հաստատվել է միջոցառումների ցանկը, նախատեսված աշխատանքների ծավալաթերթը: Ծրագրի շրջանակներում նախատեսվել է <<Սևան ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի Մարտունի և Նորատուս մասնաճյուղերում անտառտնկարկների մաքրում կատարել ընդհանուր՝ 64 հա մակերեսով հատվածներում:

Այնուհետև, դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին 83.875.000 ՀՀ դրամ արժողության թիվ ՀՀ-ԲՆ-ԴՇ-17/11 պայմանագրի շրջանակներում անտառտնկարկների մաքրման աշխատանքներ իրականացնելու նպատակով 02.10.2017 թվականին «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Վահե Գուլանյանը «Արտնաուկա» ՍՊԸ-ի տնօրեն Աննա Պողպատյանի հետ կնքել է ծառայությունների մատուցման գնման թիվ ՍԱՊ-ՄԱԾՁԲ-17/08 պայմանագիրը՝ 41,633,000 ՀՀ դրամ արժողության: Պայմանագրի հետ հաստատվել է նաև տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը և վճարման ժամանակացույցը:

19.12.2017 թվականին «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի, Մարտունու, Նորատուսի մասնաճյուղերի և «Արտնաուկա» ՍՊԸ-ի տնօրենի միջև կազմվել են հանձնման-ընդունման արձանագրություն, կատարողական ակտեր, համաձայն որոնց աշխատանքները կատարվել են լրիվ ծավալով, արժեքը կազմել է 41,633,000 ՀՀ դրամ, որոնց հիման վրա նույն օրը կազմված հաշիվ-ապրանքագրի հիման վրա ընկերությանը վճարվել է նշված գումարը:

Պարզվել է, որ ծրագրի շրջանակներում 5 հա ջրածածկ հատվածում անտառտնկարկների մաքրումն իրականացվել է <<Սևան ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի կողմից:

Քրեական գործի նախաքննության ընթացքում ստացված փաստական տվյալներից ելնելով անհրաժեշտություն է առաջացել զննել վերը նշված, ընդհանուր՝ 64 հա մակերես ընդգրկող անտառտնկարկներից մաքրված հատվածները, որի իրականացման համար անհրաժեշտ են գեոդեզիայի և չափագրության բնագավառում մասնագիտական հմտություններ և գիտելիքներ ունեցող մասնագետի աջակցություն, որպիսի նպատակով գեոդեզիստ-չափագրող մասնագետի քննչական գործողության կատարմանը ներգրավվելու համար գրություն է հասցեագրվել << ԱԳԿՊ <<Գեոդեզիայի և քարտեզաչափագրություն>> ՊՈԱԿ:

Ստացված պատասխան գրության համաձայն՝ որպես գեոդեզիստ-չափագրող, տրվել են << ԱԳԿՊ <<Գեոդեզիայի և քարտեզաչափագրություն>> ՊՈԱԿ-ի աշխատակից, քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի /հաշվառողի/, հողաշինարարի որակավորում ունեցող՝ Գնել Հրանտի Առաքելյանի տվյալները:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով << քր. դատ. օր-ի 55-րդ, 84-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Թիվ 61202918 քրեական գործով որպես մասնագետ նշանակել << ԱԳԿՊ <<Գեոդեզիայի և քարտեզաչափագրություն>> ՊՈԱԿ-ի աշխատակից, քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի /հաշվառողի/, հողաշինարարի որակավորում ունեցող՝ Գնել Հրանտի Առաքելյանին /վկայական թիվ 050/:
2. Գնել Հրանտի Առաքելյանին ծանոթացնելով սույն որոշմանը և պարզաբանել << քր. դատ. օր. 84-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները:

**Հատկապես կարևոր գործերով քննիչ՝** [signature] **Ա. Գ. Ասատրյան**

Թիվ 61202918 քրեկան գործով մասնագետ նշանակված Հրանտ Առաքելյանը հայտարարեց, որ. Ծանոթացա որոշմանը և քր. դատ. օր. 84 հոդվածով սահմանված իրավունքներին և պարտականություններին:

Մասնագետ՝ [signature] Հ. Առաքելյան

06 05 2019թ.